



## 53. ՍԱԲՐԻ ՏԻԿԻՆ

Ժամանակով մե մարթ ու կնիկ են հըլնում: Էս մարթն ու կնիկը մե ախճիկ ունին, էլ էրեխա չունին: Ախճիկը, որ ջոշնում ա, դրոց են տալում: Դպրոցի ճամբեն ժամի մոտով ա հըլնում: Էս խեխճ ախճիկը ամեն օր իշքան ժամի մոտով հըլնցնում ա, որ դրոց էթա, մեկը ասում ա. «Հուրի՛-փերի, դու մե մեռելը օխտը տարի կըպախես»:

Մե քանի անքամ էս ձենը լսալուց ետո ախճիկը վախենում ա, էլ ժամի մոտով չի էթում, ճամբեն փոխում ա:

Ճամբեն էլ ա փոխում, էլի հնար չի հըլնում:

Հըմա էթում ա ճամբի ճեսը, տենում ա էլի էն ձենն ասավ.—Հուրի՛-փերի, դու մե մեռելը օխտը տարի կըպախես:

Էս անքամ ախճիկը խորն ասում ա.—Այ խեր, իշքան էթում եմ դրոց, ճամբի ճեսին մեկն ասում ա. «Հուրի՛-փերի, դու մե մեռելը օխտը տարի կըպախես»: Ճամբեն էլ փոխեցի, էլի ասում ա: Ես վախենում եմ էս ջեղը մնալուց: Ընձի տա՛ր հուրիշ տեղ:

Խերն ու մերը տենում են, որ ախճիկը օր օրի վրեն ետ ա էթում, ծախում են հիրանց ունեցած-չունեցածը, էթում են հուրիշ տեղ: Մե կանանչ դաշտի մեջ նստան դինջնալու: Ախճիկը ման ա զալում, ծաղիկ ա քաղում, խերն ու մերը նստում են: Ախճիկը ծաղիկ քաղելով եռանում ա, մեկ էլ տենում ա մե փունջ ծաղիկ:

Էթում ա, որ քաղա: Ձեռը քցում ա, որ քաղա, մեկ էլ տենում ա հետևից էրկաթե գռները փակվան: Ախճիկը լալում ա, մխկտում ա, հավար ա կանչում, հըմա հնար չի հըլնում, խերն ու մերը ձենը չեն լսում: Տենում ա հնար չըկա, վեր ա հըլնում, էտ քաղի մեջ մե պալատ կար, էթում ա մտնում էտ պալատը: Պալատի մեջը ման ա զալում, մեկ էլ մե դուռ ա բացում, ինչ տեսնա՝ մե դազաղ:

Էս դազաղի մեջը՝ մե մեռել, մեռելի դոչին էլ հիրա տեսած ծաղիկը: Ծաղիկի փունջը վերցնում ա, սկսում ա մեռելի հերեսի վըրվի ճանջերը քշել:

Ախճիկա հերն ու մերը ախճիկան շատ ման էկան, լացան, գլոխ-ները տփին, տեսան չըկա, ետ էկան էլի հիրանց ջեղը ու մացին ըտե: Էթող-գալողին խաղնում ին ախճիկա մասին, հըմա ոչ մեկը

տեղեկութուն չեր տալում: Թո բառնք ըստե հիրանց գլոխը տփեն, մենք խաբար տանք ախճկանից:

Ախճիկն սկսում ա մեռելին խնամել: Տենում ա, որ էտ տղեն ոնչ մեռուկ ա, ոնչ կենթանի: Սիրտը տրփում ա, հըմա իշքան կմշտում ա, վրեն խաբար չըկա: Տենում ա, որ էտ տեսակ դրութուն ա, որոշում ա ինչ էլ հըլնի էտ տղից չեռանա, օխտը տարի սպասա, չանքի տղեն լավնա, ետո տենա՝ ինչ ա հըլնում: Ուտելիք-խմելիք, ամեն բան կար էս տան մեջը: Օխտը տարի մնում ա էս տղի մոտը: Մե օր էլ մտածում ա դուս գա, մեշու թարմ օժ չնչա, զիբարը բացա: Էտ վախտը մե բոշա մաղ ծախող ըտեղից էթում էր, ձեն տվեց. «Մաղ չե՞ք առնում»:

Ախճիկը որ տեսավ բոշի ախճկան, կանչեց, ասավ.—Քույրի'կ ջան, ես մաղ չեմ առնում, չի՞ հըլնի մե ժամով գաս, մե խիվանդ ունեմ, ճանջերը քշես, ես մեշու լողանամ, մաքրվեմ, գամ:

Բոշեն համաձայնվում ա ու էթում ա խիվանդի մոտը:

Ախճիկը որ գնում ա լողանալու, չորերը լվալու, էտ վախտը տղեն գարթնում ա, տենում ա, որ հիրա կշտի խետ մե կնիկ ա նստուկ, ասում ա.—Այ ախճիկ, ես խոսկ ի տվե, որ ով ընձի խնամա, լավնամ, խետը կըպսակվեմ, հիմի, թե դու համաձայն ես, ես չեղի կառնեմ:

Բոշի ախճիկն էլ էտ էր ուզում: Էս տղի խետ դառնում են մարթը-կնիկ:

Ախճիկը լվում, թափում ա, գալում ա տենում, որ հեսա տղեն ու բոշի ախճիկը հիրար խետ նստուկ, թևները քցեր են հիրար վիզ, խոսում ու ծծում են:

Որ էս ախճիկը գալում ա, տղեն բոշի ախճկան խարցնում ա.—Էս ախճիկն էս ո՞վ ա, ըստե ի՞նչ ա անում:

Բոշի ախճիկն ասում ա.—Էտ ախճիկը մեր ծառան ա:

Էս խեխճ ախճիկը մնում ա շիվար, էլ չի կանում ա, որ ձեն խանա, սուսուփուս էթում ա կովսնին, նստում ա ու սկսում ա լացը: Ի՞նչ աներ, ո՞նց հաստատեր, որ հինքն ա օխտը տարի օր ու ումբը մաշե, մեռելին պախե:

Էսենց գոխսուկ լալով, մխկտալով՝ մե ամիս էս մարթըկնգան ծառայում ա, ձեն չի խանում:

Ուզում ա, որ մե օր սիրտը բացա, հըմմեն բան դուզն ասա, հըմա բոշի ախճիկը մե հրոպե տղին մինակ չի թողում ա, վախենում ա, որ հանգարց ախճիկը սամթ կըքցա, խետը կըխոսա, զախտնիքը կըբացիք:

Մե ամիս ետո տղեն, որ առոխճանում ա, ասում ա.—Էթում եմ քաղաքը, կնիկ, ի՞նչ ես ուզում, բերեմ քո խըմար:

Կնդան ինչ որ պետք էր, ասում ա, որ բերա:

Ետո ախճկան ա խարցնում:

Ախճիկն ասում ա.—Ես մե խատ Սարբի տիկին եմ ուզում:

Տղեն մնաց շիվար, թե Սարբի տիկինն ի՞նչ ա:

Գնաց քաղաք, առլոտուր արավ, սաղ քաղաքը ման էկավ, հա-  
զար մարթի խառցուց, մարթիկ ծծղացին, թե Սարբի տիկի՞նն ինչ  
ա:

Վերչը փոր-փոշման հիրիկվա յան գալում էր տունը:

Մե մարթ տենում ա, որ էս մարթը շատ նիյաթ ա, խարցնում  
ա.—Ախապե՛ր, էտ ի՞նչ դարդ ունես, որ էտքան նիյաթ ես, ասա',  
կարող ա ես մե ճար անեմ:

Տղեն պատմում ա, որ հիրանց ծառան Սարբի տիկին ա ուզում,  
իշքան ման ա էկե, քթնել չի կացե, վերչը դառտակ ա տուն էժում:

Էս մարթն ասավ.—Ախապե՛ր, քո ծառան մեծ դարտի տեր ա: Ես  
չեղի կըտամ մե խատ Սարբի տիկին, փող չեմ առնի, կըտանես, կը-  
տենաս՝ ինչ ա հըլնում, կըզաս կասես, ետո փողը կըտաս:

Սարբի տիկինը, որ տաս քո ծառային, կառնի կէթա մե տալ-  
դա տեղ, կընստի, կըսկսա խետը խոսալ: Որ կըխառցնա՝ հիմի ե՞ս  
պաղուեմ, թե՞ դու, դու չուտ կասես՝ թո Սարբի տիկինը պաղոի,  
հըմա մե հրոպես հուշցար, ախճիկը կըպաղոի:

Էս տղեն չնորակալ հելավ, Սարբի տիկինն առավ ու գնաց:  
Կնդան հիրա ուզածը տվեց, Սարբի տիկինն էլ տվեց ախճկան:  
Ախճիկը տիկինն առավ ու գնաց բաղը, մե ծառի տակ, տալդա տեղ  
նստավ ու սկսեց Սարբի տիկինն պատմել հիրա դարդը:

Վերչը ասավ.—Սարբի' տիկին, ես օխտը տարի պախեմ, մե ժա-  
մով էթամ զլոխս լվալու, բոչի ախճիկը նստի ընզե, տղեն զարթնի,  
ընդրան առնի, ընձի անա ծառա, Աստված ըսկի էս բանը դարուկ  
կանա՞՝, դե ասա', հիմի ե՞ս պաղուեմ, թե՞ դու:

Տղեն ծառի հետևից ասավ.—Թո Սարբի տիկինը պաղոի:

Որ տղեն էսենց ասավ, Սարբի տիկինը պլթաց: Ախճիկը ետ  
դարցավ, տղին տեսավ: Տղեն ախճկա ձեռից բոնեց բերեց տունը,  
բոչի ախճկան դուս արավ, ետո գնաց Սարբի տիկին ծախողին հի-  
րա ուզածը տվեց, չնորակալ հելավ: